ԱԳՐՈԶԲՈՍԱՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՏԴ 338.48
DOI: 10.56246/18294480-2023.14-16

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
«Սեդրակյան», բարեգործական հիմնադրամի գլխավոր տնօրեն, տնտեսագիտության թեկնածու
էլփոստ՝ armanhar@list.ru
ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐԻ
Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու
էլփոստ՝ marry.marrgarryan@gmail.com

Հոդվածի նպատակն է Հայաստանի համար բացահայտել գբոսաշրջային բիզնեսի զարգացման հիմնախնդիրները, մատնանշել դրա զարգացման առավել արդյունավետ ուղղությունները: Դրա համար հեղինակները նախ ներկայացնում են գբոսաշրջության անցած շուրջ 20 տարվա փոփոխությունները և արդի վիճակը՝ նշելով որ համաշխարհային գբոսաշրջության շուկայում գործող բոլոր 7 ձևերը (մշակութային, բնության, գործարար, ժամանցային, առողջարանային, արկածային և բժշկական) գործում են ՀՀ-ում:

Մասնագիտական գրականության նյութերի վերլուծությամբ հեղինակները հանգում են այն եզրակացության, որ Հայաստանում համեմատաբար առավել կիրառելի է համարվում ագրոգբոսաշրջությունը, քանի որ այն ունի հարուստ կենսաբազմազանություն, լանդշաֆտներ, գյուղական բնակավայրում բնակարանային ֆոնդեր՝ գյուղական տուրիստներին պատշաճ մակարդակով ընդունելու և սպասարկելու համար:

Այնուհետև նշվում են այն հիմնական խոչընդոտները և դժվարությունները, որոնք թույլ չեն տալիս առավել բարձր տեմպերով զարգացնել գբոսաշրջությունը Հայաստանում՝ հանդես գալով կոնկրետ առաջարկություններով, մատնանշելով նաև առկա չօգտագործվող ռեսուսները:

Այդ ամենի հետ միասին հարկ է նշել, որ թեև Հայաստանի Հանրապետությունն ընդհանուր գբոսաշրջության և մասնավորապես ագրոգբոսա-

շրջության համար ունի բավարար ռեսուրսներ, այնուհանդերձ առկա են մի շարք խոչընդոտներ, այն է՝

- ***անհամաչափ են բաշխված թույլատրված ոլորտի ենթակառուցվածքները (հյուրանոցային տնտեսություններ, ճանապարհներ, հուշանվերներ խանութներ, սպասարկման ծառայություններ և այլն),***
- ***ցածր է գովազդային- տեղեկատվական և գիդերի ծառայությունների մատուցման մակարդակը,***
- ***չկա զբոսաշրջության զարգացման հայեցակարգ,***
- ***անմիխիթար վիճակում են մարզային և միջհամայնքային ճանապարհները և այլն:***

Զբոսաշրջության հետագա զարգացման համար անհրաժեշտ է՝

- ✓ ***գույքագրել ու գնահատել զբոսաշրջային ռեսուրսները,***
- ✓ ***մշակել և կիրառել ժամանակակից տեխնոլոգիաներով գովազդային մեթոդներ,***
- ✓ ***մարզպետարանների կողմից մշակել զբոսաշրջության զարգացման ծրագրեր, իսկ մարզերի վարչական տարածաշրջաններում ստեղծել զբոսաշրջային գրասենյակներ,***
- ✓ ***իրականացնել գիդերի վերապատրաստում, իսկ ագրոզբոսաշրջության զարգացման նպատակով կազմակերպել միջազգային փորձի արմատավորման դասընթացներ և այլն:***

Բանալի բառեր՝ *զբոսաշրջություն, ձեռներեցություն (բիզնես), ագրոզբոսաշրջություն, գյուղական կյանք, տուրիստական ենթակառուցվածքներ*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Զբոսաշրջությունը համաշխարհային մասշտաբով արագ տեմպերով զարգացող ինդուստրիա է, որի աճի տեմպերը գերազանցում են ամբողջական տնտեսական աճի տեմպերին: Այսպես, եթե 1995-2000թթ. աշխարհում տնտեսական աճի միջին տեմպը կազմել է 3%, ապա զբոսաշրջությանը՝ 4,5%:

2019 թվականին զբոսաշրջության և ճամփորդության մասնաբաժինը համաշխարհային տնտեսությունում գնահատվել է 8.8 տրիլիոն ԱՄՆ դոլար: 2019թ. տվյալներով՝ զբոսաշրջությանը բաժին է ընկնում 10 աշխատողից մեկը (319 միլիոն մարդ), և ապահովում է համաշխարհային համախառն արդյունքի (ՀՆԱ) 10,4%-ը (2019թ.): Նույն ժամանակահատվածում համաշ-

խարհային տնտեսության 3,2–ի համեմատ համաշխարհային զբոսաշջությունը գրանցել է 3,9% աճ: Այս շուկայում այցելուների ծախսն իրենց ճամփորդության վրա գնահատվում է 5.7 տրիլիոն դոլար, որը ներառում է ինչպես ժամանցային, այնպես էլ գործարար ծախսերը և արտացոլում է թե ներգնա և թե ներքին ճամփորդությունները [1]:

Համաշխարհային զբոսաշրջային շուկայում հիմնականում զարգանում են 7 տարբեր զբոսաշրջային ձևեր: Դրանք են՝ մշակութային, բնության, գործարար, ժամանցային, առողջարանային, արկածային և բժշկական: Մենք փորձում ենք այս հոդվածի շրջանակներում բացահայտել այն խոչընդոտները, որոնք թույլ չեն տալիս ավելի բարձր տեմպերով զարգացնել զբոսաշրջությունը Հայաստանում, հիմնախնդրի համակողմանի ուսումնասիրման միջոցով ներկայացնել առաջարկություններ, որոնք չեն արվել նախկինում այլոց կողմից:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ելնելով ուսումնասիրվող թեմայի առանձնահատկությունից հոդվածի շրջանակներում իրականացված վերլուծությունների ժամանակ կիրառվել է ֆունկցիոնալ կախվածության մեթոդը, համաձայն որի՝ տնտեսական կյանքում առանձին զարգացումները կամ փոփոխությունները ողղակիորեն կախված են այլ գործոններից: Դա նշանակում է, որ զբոսաշրջության զարգացումն ուղղակիորեն կախված է մարդկանց ֆինանսական կարողություններից և ազատ շարժվելու իրավունքից, հետևաբար զբոսաշրջության մարկարդակն ամբողջ աշխարհում կրճատվել է կորոնավիրուսի, իսկ ՀՀ-ում՝ նաև արցախյան պատերազմի պատճառով:

Պոզիտիվային և նորմատիվային հետազոտության մեթոդների կիրառմամբ ֆիքսվել է փաստը (ինչ ունենք)՝ առանց գնահատական տալու դրա լավ կամ վատ լինելուն, ապա պատասխան է տրվել, թե ինչպես վերաբերվել հարցին, հանդես գալ առաջարկություններով, որպեսզի բարելավվի իրավիճակը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Հայաստանում 2001 թվականից զբոսաշրջությունը հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: Աստիճանաբար զարգանում են ոլորտի ենթակառուցվածքները՝ հյուրանոցային տնտեսությունները, ճանապարհները,

սննդի և զվարճանքի մատուցման ծառայությունները և միջազգային չափանիշներին համապատասխան «Զվարթնոց» օդանավակայանը: Միայն 2001-2010 թվականներին հանրապետությունում ներգնա զբոսաշրջիկների թվի միջին տարեկան աճը կազմել է 24,3% [2]: Վերջին վեց տարիների ընթացքում (2013-2019թթ.) զբոսաշրջիկների ժամանումների աճը 1100 հազարից հասել է 1600 հազարի, ավելացել է շուրջ 500 հազ. չափով[1], որը զգալի ազդեցություն է թողել երկրի տնտեսության վրա: 2019թ. երկրի ՀՆԱ-ում անուղղակի ներդրումները կազմել են 14,1%՝ ընդհանուր առմամբ հասնելով 1.8 միլիարդ ԱՄՆ դոլարի, որն ապահովել է 36900 մարդու մշտական և 137 հազ. ընդհանուր զբաղվածությունը, ինչը կազմում է երկրի զբաղվածության 12,5%:

Համաձայն պաշտոնական վիճակագրական տվյալների՝ 2019 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին զբոսաշրջային այցելուները կազմել է 1894377*, աճը 2019 թվականին 1651782 համեմատ աճը կազմել է 14,7 տոկոս [3]:

Կորոնավիրուսի համավարակի հետ կապված՝ զգալիորեն կրճատվել է արտաքին զբոսաշրջությունը, սակայն դա նպաստել է ներքին զբոսաշրջության ծավալների ավելացմանը, քանի որ մեր հայրենակիցների մի մասը, որը նախկինում զբոսաշրջում էր արտասահմանում, ներկայումս «ստիպված է» իր հանգիստն անցկացնել Հայաստանում (Հեռուստատեսային լուրեր Հ1, 11.12.2021):

Դեպի Հայաստան զբոսաշրջիկների զգալի մասը ժամանում են Ռուսաստանից, ԱՄՆ-ից և Իրանից: Անշուշտ, զբոսաշրջիկների մեջ մեծ տեսակարար կշիռ ունի սփյուռքահայերի բաժինը, որոնք հիմնականում մշակութասեր զբոսաշրջիկներ են և ձգտում են վերագտնել ու վերականգնել իրենց ընտանեկան ժառանգությունը: Նրանց Հայաստան է բերում հայրենիքի կարոտը և հավատքը առաջին քրիստոնեական երկրի հանդեպ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից 2019 թվականին կատարած հետազոտությունների արդյունքում պարզ դարձավ, որ սփյուռքի մաս չկազ-

---

[1] UMWTO, 2019:

* 2020 և 2021 թվականներին զբոսաշրջության վերաբերյալ վիճակագրական տվյալները չենք ընդգրկել վերլուծության մեջ՝ նկատի ունենալով, որ այդ ընթացքում համավարակը և Արցախյան պատերազմը մեծ բացասական ազդեցություն են թողել ՀՀ զբոսաշրջանային բիզնեսի վրա: Ուղղակի նշենք, որ 2020 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ներքին զբոսաշրջության քանակը կազմել է 934981, իսկ 2021-ին՝ 1435111 մարդ:

մող օտարերկրացի զբոսաշրջիկները կազմում են ընդհանուրի 69 %, ինչը փաստում է, որ ոչ հայազգի արտասահմանցիների համար Հայաստանն ունի մեծ գրավչություն: Ի տարբերություն սփյուռքահայ զբոսաշրջիկների՝ օտարերկրացիները հանգրվանում են տարբեր կացարաններում՝ 3-4 աստղանի հյուրանոցներում (37%), հարազատների տներում (19%), հոսթելներում (14%), հյուրընկալվում են տեղացիների տներում (12%): Նրանց ավելի շատ գոհացնում են տեղացիների վերաբերմունքը, ջերմությունը և բարությունը:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը ներկայումս մատուցում է համաշխարհային զբոսաշրջության բոլոր 7 ենթաոլորտների (ձևերի) ծառայություններ: Դրանցում ամենամեծ ծավալը բաժին է հասնում մշակութային զբոսաշրջանառությունը, որը շատ տրամաբանական է՝ ելնելով Հայաստանի պատմության, մշակույթի, քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունած առաջին երկրի և բազմաթիվ այլ արժանիքների ու հարուստ ժառանգությունների պատճառով:

Երկրորդ տեղը զբաղեցնում է բնության զբոսաշրջությունը, որի հիմնական շարժառիթը երկրի հարուստ կենսաբազմազանությունն է և լանդշաֆտները:

Հայաստանը բնության զբոսաշրջության այցելուներին առաջարկում է երկրի լանդշաֆտներին ծանոթանալու բազմաթիվ տարբերակներ՝ մշակութային և պատմական հնավայրեր այցելելուց հետո: Բնությունը նախընտրող զբոսաշրջիկներն իրենց ավելի լավ են զգում հանրապետության գյուղական բնակավայրերում՝ հաճախ ձգտում են ձեռք բերել նոր հմտություններ, հյուրընկալվել և ստանալ տեղական մշակույթում ներգրավվելու հնարավորություններ: Բնության զբոսաշրջության շրջանակներում առանցքային ձև է համարվում ագրոզբոսաշրջությունը, էկոզբոսաշրջությունը և մասամբ էլ բնության գրկում ժամանցի անցկացումը:

Հայաստանում գտնվելու ժամանակ զբոսաշրջիկները հաճախ նախընտրում են տարբեր ժամանցի ձևեր (ձկնորսություն, սննդի, գինու, կոնյակի համտեսում, մասնակցություն փառատոների, ազգային ծեսերի և այլն):

Թեև մշակութային զբոսաշրջությունը այցելության հիմնական նպատակն է լինում, այդուհանդերձ բնության և ժամանցային զբոսաշրջությունները երկրորդային զբոսաշրջության հիմնական ուղղություններն են, ինչն էլ համալիր ձևով փոխլրացնում են իրար և ավելի պատկերավոր ձևով ներկայացնում Հայաստանը՝ զբոսաշրջությունը դարձնելով դիվերսիֆիկացված:

Զբոսաշրջությունը Հայաստանում զգալի հաջողությունների է հասնում նաև առանց վիզային ռեժիմի հասանելիությունն ընդլայնելու շնորհիվ:

Ճանապարհորդության և զբոսաշրջության մրցունակության 2017 թվականի վիզային պահանջների վարկանիշում ՀՀ-ն աշխարհի 136 երկրների շարքում զբաղեցրել է 54-րդ տեղը՝ ամենաբարձրը տարածաշրջանում: Հայաստանն առանց վիզայի ազատ մուտքի հնարավորություն տվեց 63 երկրի, որոնք գրավիչ են Եվրոպայի և ԱՄՆ-ի զբոսաշրջային շուկաների համար [4]:

Ներկայումս աշխարհում ավանդական զբոսաշրջությանը զուգահեռ լայն տարածում է ստանում գյուղական տուրիզմը, էքստրիմալ տուրիզմը և ագրոզբոսաշրջությունը: Վերջինս մեծ հետաքրքրություն է առաջացնում զբոսաշրջիկների մոտ, քանի որ նրանք հնարավորություն են ունենում շփվելու գյուղական կյանքի հետ, ծանոթանալու գյուղատնտեսական մթերքների արտադրության գործընթացին: Արդյունքում ագրոզբոսաշրջությունը նպաստում է գյուղատնտեսության զարգացմանը, գյուղմթերքների շուկայի ընդլայնմանը, որն էլ իր հերթին նպաստում է գյուղական բնակավայրերում գործազրկության կրճատմանը:

Ագրոզբոսաշրջության բնագավառում ինը երկիր համարվում են ամենահետաքրքիրները, որոնց թվում է նաև Հայաստանը: Դրանք են Շրի Լանկան (Ցեյլոն կղզին), Լեհաստանը, Կիպրոսը, ԱՄՆ-ը, Իտալիան, Չեխիան, Ուկրաինան և Խորվաթիան2:

Հարկ է նշել, որ խորհրդային տարիներին ագրոզբոսաշրջության (ընտանեկան հանգստի) կազմակերպման լավ ավանդույթներ կային Հայաստանում, ինչը իրականացվում էր հանգստյան տների միջոցով, որում ընտանիքներն առանձին-առանձին տեղավորվում էին քոթեջներում և բնության գրկում վայելում հանգիստը: Դրանք տարբերվում էին առողջարաններից (Արզնի, Ջերմուկ, Հանքավան, Բժնի, Արզական, Տաթև և այլն), որտեղ առաջին պլանում դրված էր ոչ թե հանգիստը, այլ բուժման պրոցեդուրաները՝ հիմնականում տաք ջրի և ցեխի վանաների ընդունումը: Այդ ժամանակ, որպես ընտանեկան հանգստի կազմակերպման վայրեր, առանձնանում էին Սևանի ավազանի հանգստյան տները, Բյուրականը, Կարմրաքարը, Ծաղկաձորը, Դիլիջանի կոմպոզիտորների միությունը, Սևանի գրողների միություն, հանրապետության խոշոր ձեռնարկությունների կողմից ստեղծված սեփական հանգստյան տները: Շուկայական հարաբերություններին անց-

[2] Globus 77. World press.com (ագրոտուրիզմ):

ման և պետական գույքի մասնավորեցման հետևանքով հանգստի այդ ձևն էլ վերացավ: Այսօր դրանք չկան, բայց փորձ է կատարվել փոխարինել ագրոզբոսաշրջության զարգացմամբ ինչպես գյուղական համայնքներում, այնպես էլ նախկին լքված հանգստյան տների վերագործարկման ճանապարհով:

Ագրոզբոսաշրջությունը մեծ հետաքրքրություն է առաջացնում տուրիստների շրջանում, որն էլ խթանում է գյուղատնտեսության զարգացմանը, իսկ դա իր հերթին՝ ուղղակիորեն կամ միջնորդավորված ձևով երկրի ընդհանուր տնտեսության զարգացմանը: Ագրոզբոսաշրջությունը ենթադրում է ակտիվ հանգստի նպատակով ժամանակավոր այցելություն գյուղական վայրեր: Այն հաճելի հանգստի ձև է նրանց համար, ովքեր բնակվում են խոշոր քաղաքներում՝ ծանոթանալ գյուղական ապրելակերպի, ավանդույթների և ծեսերի հետ: Հայկական խոհանոցի յուրահատկությունները, ավանդական հյուրասիրությունը, նոր ծանոթներ ունենալը էական գործոններ են հանդիսանում ներքին և արտաքին զբոսաշրջության և հատկապես ագրոզբոսաշրջության զարգացման գործում: Զբոսաշրջության այդ տեսակի պահանջվածությունն ուղղակիորեն կապվում է ուրբանիզացիոն գործընթացների հետ՝ քաղաքային բնակչության ավելացում ի հաշիվ գյուղական բնակչության կրճատման:

Ագրոզբոսաշրջությունը հատկապես հեռանկարային է լեռնային ռելիեֆով երկրների համար, որոնց շարքում իր տեղը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետությունը: Այն ունի մի շարք առանձնահատկություններ [5]:

Ագրոզբոսաշրջությունը մատչելի է բնակչության գրեթե բոլոր խավերի համար, քանի որ համեմատաբար քիչ ծախսատար է: Օրինակ՝ ներկայիս պայմաններում հանրապետության գյուղական բնկավայրերում մեկ մարդ/օրվա հաշվով հանգիստը կազմում է 5-7 հազ դրամ, մինչդեռ սովորական հանգստյան տներում ագրոզբոսաշրջիկի ծախսերը ցածր են 35-40 տոկոսով:

Ագրոզբոսաշրջությունն ընտանեկան զվարճանք է, ինչը հնարավորություն է տալիս հատկապես երեխաների համար, կազմակերպել բարոյահոգեբանական և աշխատանքային գործունեություն: Դա գյուղատնտեսական աշխատանքներին մասնակցելու և գյուղական կենցաղին ինտեգրվելու լավագույն միջոցառումներից է:

Ագրոզբոսաշրջության կազմակերպումը մեծ ներդրումներ չի պահանջում, որպես հիմնական իրականացնող՝ հանդես է գալիս գյուղական բնակչության միջին և ունևոր խավը, որն առաջին հերթին ապահովված է կենցաղային բավարար պայմաններով: Բացի դրանից՝ գյուղական զբոսաշրջությունը նպաստում է գյուղատնտեսության զարգացմանը, քանի որ նրանք լրացուցիչ պահանջարկ են ներկայացնում գյուղմթերքների նկատմամբ:

Ագրոզբոսաշրջությունը նպաստում է գյուղական կյանքի աշխուժացմանը, գյուղում մշակույթի և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը, ունի մեծ սոցիալական էֆեկտ՝ հնարավորություն է տալիս գյուղական համայնքներում բարձրացնել կյանքի որակը, բարելավելու բնակչության հիգիենիկ վիճակը, բարեկամական հարաբերություններ հաստատել զբոսաշրջիկների և գյուղացիների միջև՝ թուլացնելու լարված սոցիալական հարաբերությունները, նվազացնելու զարգացման տարբերությունները տարածաշրջանների միջև [6]:

Հայաստանն առաջին հայացքից ունի բոլոր պայմանները զբոսաշրջության զարգացման հարցում՝ նպաստավոր բնակլիմայական ռելիեֆ, բնական ու պատմամշակութային հուշարձաններ, հարուստ ֆլորա և ֆաունա, զբոսաշրջության այլ ռեսուրսներ, որոնց օգտագործումով կարելի է խթանել ինչպես ավանդական, այնպես էլ գյուղական և էքստրիմալ ագրոզբոսաշրջությունը:

Հարկ է նշել, որ տնտեսվարման արդի պայմաններում հանրապետությունում համայնքի բյուջեների ֆինանսական սղության և ներդրումային ծրագրերի բացակայության դեպքում, տարածաշրջանային զարգացման հնարավորությունները չի կարելի գնահատել բավարար: Այստեղ անհրաժեշտ է պետական միջամտություն. կառավարությունը պետք է նպաստի զբոսաշրջության զարգացմանը մարզերում և համայնքներում: Ոլորտի զարգացմանը պետական աջակցությանն անհրաժեշտ է, բայց ոչ բավարար պայման: Միաժամանակ պետք է ներգրավել մասնավոր հատվածին, որի պահանջվածությունը զբոսաշրջության զարգացման գործում բացատրվում է նրանով, որ գրեթե բոլոր հյուրանոցները, խանութները, կրպակները, հասարակական սննդի սուբյեկտները, սպասարկման մյուս ծառայությունները պատկանում են վերջիններիս: Ոլորտի զարգացման հարցում կարևորվում է նաև հուշանվերների վաճառքը, ազգային ավանդական ուտեստների մատուցումը և ծառայությունների զարգացումը, ինչն էլ իր հերթին կխթանի հա-

մապատասխան արտադրությունների և ծառայությունների մատուցման զարգացմանը:

Վերջին տարիներին Հայաստանում զարգանում են զբոսաշրջության գրեթե բոլոր տեսակները, սակայն ագրոզբոսաշրջությունն ավելի է մեծանում, որին նպաստում է զբոսաշրջային նոր ենթակառուցվածքների (ճոպանուղիներ, հարմարավետ տրանսպորտային միջոցներ, սննդի արագ մատուցման ծառայություններ և այլն) հիմնումը, որոնք լրացուցիչ նախադրյալներ են ստեղծում զբոսաշրջության հետագա զարգացման համար և Հայաստանը որպես զբոսաշրջային երկիր ճանաչելու տեսանկյունից:

Նշենք, որ զբոսաշրջային գործակալություններն ակտիվորեն «տուրփաթեթներ» են մշակում դեպի այն վայրերը, որոնք խոստանում են զբոսաշրջիկների մեծ հոսք: Ագրոզբոսաշրջությունը զբոսաշրջային այն առաջատար ճյուղերից է, որի զարգացումը կնպաստի լուծելու տարածաշրջանային մի քանի խնդիրներ.

- համայնքների համաչափ զարգացում,
- զբաղվածության ավելացում,
- գյուղատնտեսության զարգացում,
- գյուղական բնակավայրերի սոցիալական հարցերի մեղմացում,
- բնակչության արտագաղթի նվազում և այլն:

Ամփոփելով վերլուծության արդյունքերը՝ հավելենք, որ միանշանակ չի կարելի շեշտը դնել զբոսաշրջության զարգացման մեկ տեսակի վրա, այլ անհրաժեշտ է համակցել դրա բոլոր ձևերը և ստեղծել համալիր զբոսաշրջային ծառայություններ: Այդ առումով հանրապետությունում առկա է հստակ ձևավորված զբոսաշրջային միջավայր, քանի որ պատմամշակութային հուշարձաններն ու կոթողները տեղաբաշխված են ամբողջ երկրի տարածքում, որն ավելի է մեծացնում Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային գրավչությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Չնայած զբոսաշրջության զարգացմանը և դրա դրական տնտեսական ազդեցությանը՝ ՀՀ-ն համաշխարհային զբոսաշրջության քարտեզի վրա կայուն տեղ չունի: 2013-2019 թթ ընթացքում զբոսաշրջության ծավալներն ավելացել են տարեկան շուրջ 9 տոկոսով, բայց երկրի հիմնական զբոսաշրջային շուկաներում եղել են կառուցվածքային սահմանափակ տեղաշարժեր Ռու-

սաստանի, Իրանի և Վրաստանի հետ, որոնք ապահովում են հանրապետության զբոսաշրջիկների ներհոսքի հիմնական բաժինը:

Թեև Հայաստանի մշակութային ժառանգությունը և հարուստ պատմական ու ժամանակակից ճարտարապետական կառույցները փաստագրված են, սակայն բավարար չեն ճանաչելիություն ապահովելու այցելուների պոտենցիալ քանակի համար: Համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանը պատշաճ մակարդակով չի ներկայացվում որպես զբոսաշրջային ուղղության արժեքային առաջարկ: Հայաստան ժամանած զբոսաշրջիկների 66 %-ը տեղեկություն են ստանում ոչ թե պաշտոնական խողովակներով, այլ ընկերներից կամ հարազատներից:

Այդ ամենի հետ միասին հարկ է նշել, որ թեև Հայաստանի Հանրապետությունն ընդհանուր զբոսաշրջության և մասնավորապես, ագրոզբոսաշրջության համար ունի բավարար ռեսուրսներ, այդուհանդերձ առկա են մի շարք խոչընդոտներ՝

- անհամաչափ են բաշխված թույլատրված ոլորտի ենթակառուցվածքները (հյուրանոցային տնտեսություններ, ճանապարհներ, հուշանվերներ խանութներ, սպասարկման ծառայություններ և այլն),
- ցածր է գովազդային- տեղեկատվական և գիդերի ծառայությունների մատուցման մակարդակը,
- չկա զբոսաշրջության զարգացման հայեցակարգ,
- անմիխիթար վիճակում են մարզային և միջհամայնքային ճանապարհները և այլն:

Զբոսաշրջության հետագա զարգացման համար անհրաժեշտ է՝

✓ գույքագրել ու գնահատել զբոսաշրջային ռեսուրսները,

✓ մշակել և կիրառել ժամանակակից տեխնոլոգիաներով գովազդային մեթոդներ,

✓ մարզպետարանների կողմից մշակել զբոսաշրջության զարգացման ծրագրեր, իսկ մարզերի վարչական տարածաշրջաններում ստեղծել զբոսաշրջային գրասենյակներ,

✓ իրականացնել գիդերի վերապատրաստում, իսկ ագրոզբոսաշրջության զարգացման նպատակով կազմակերպել միջազգային փորձի արմատավորման դասընթացներ և այլն:

Ագրոզբոսաշրջությունը խթանում է գյուղմթերքի հանդեպ պահանջարկը, գյուղական կյանքի ակտիվացմանը, գյուղերում սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը, ապահովում է սոցիալական տեսանելի

էֆեկտ՝ բարձրացնում է կյանքի որակը (բարելավվում է բնակչության հիգիենան, ստեղծում է աշխատատեղեր, թուլացնում է լարված սոցիալական հարաբերությունները և այլն): Դրա համար անհրաժեշտ է նաև տեղական գյուղատնտեսական հումքի բազայի վրա կազմակերպել այնպիսի արտադրանքների թողարկում և տոնավաճառներ, ծեսեր, որոնք կկգրավեն զբոսաշրջիկների ուշադրությունը, կնպաստեն նրանց հոսքի ավելացմանը:

Այսպիսվ, հանգում ենք այն կարծիքին, որ Հայաստանում զբոսաշրջության զարգացումը կարող է «մուլտիպլիկատորի դեր կատարել ընդհանուր սոցիալ-տնտեսական հարցում»:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ զբոսաշրջության զարգացման ռազմավարության նախնական վերլուծություն: Հավելված 3, ՀՀ կառավարության 2020 որոշում:
2. ՀՀ զբոսաշրջության բնագավառի վերլուծություն 2010թ. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Եր. 2011, էջ 2:
3. www.mineconomy.am
4. https://www.mfa.am
5. Ավետիսյան Ս. Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը, Եր., 2010, «Լիմուշ», էջ 128;
6. Հարությունյան Ա., Եղիազարյան Կ., Ագրոզբոսաշրջության զարգացումը որպես ՀՀ գյուղական բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման ուղի//Տնտեսության և կառավարման հիմնախնդիրներ/ Գիտական աշխատանքների զարգացման ժողովածու/, էջ 83-98, Գիրք 7, Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտ, Երևան, ՕՐ-ԴԱՐ, 2014:

THE NECESSITY AND OPPORTUNITIES OF AGROBUSINESS DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

HAYRAPETYAN ARMEN
PhD in Economics
General Director of the «Sedrakyan» Charity Foundation
e-mail: armanhar@list.ru
MARGARYAN MARY
PhD in Economics
Assistant Professor at the Chair of Agribusiness Management and Politics
at the Armenian National Agrarian University
e-mail: marry.marrgarryan@gmail.com

The purpose of the article is to discover the problems of the tourism business development for Armenia and indicate the most effective direction of its development. First, the authors present the past 20 years of tourism changes and the current state, indicating that all 7 types of tourism markets (cultural, eco, business, leisure, wellness, adventure and health) operate in Armenia.

By analyzing the materials of professional literature, the authors come to the conclusion, that in Armenia agrotourism is considered to be relatively suitable as it has rich biodiversity, landscapes and housing funds in rural areas to accept and serve rural tourists at a proper level.

Then they mention the main obstacles and difficulties that prevent the development of tourism in Armenia at a higher rate, making specific recommendations, also pointing out the existing unused resources. Along with all above mentioned, it should be noted that although the Republic of Armenia has sufficient resources for the development of tourism in general and agrotourism in particular, there are still a number of obstacles:

- Permitted sector infrastructures are disproportionately distributed.
- The level of providing advertising-informational and guide services is low,
- There is no tourism development concept,
- Regional and intercommunity roads are in poor condition etc.

For the further development of tourism, it is necessary to take an inventory and evaluate tourism resources:

- ✓ develop and apply advertising methods using modern technologies,
- ✓ work out tourism development programs by regional administrations,
- ✓ create tourism offices in the administrative regions,

✓ carry out training of guides,

✓ organize international experience rooting courses for the development of agritourism.

Key words: *tourism, entrepreneurial activity, agrotourism, rural life, tourist infrastructure.*

НЕОБХОДИМОСТЬ И ВОЗМОЖНОСТИ РАЗВИТИЯ АГРОБИЗНЕСА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АЙРАПЕТЯН АРМЕН

Кандидат экономических наук

Генеральный директор благотворительного фонда «Седракян»

электронная почта: armanhar@list.ru

МАРГАРЯН МЭРИ

Кандидат экономических наук

электронная почта: marry.marrgarryan@gmail.com

Цель статьи - выявить проблемы развития туристического бизнеса в Армении, указать на самое эффективное направление его развития. Во-первых, авторы представляют изменения в туризме за последние 20 лет и текущее состояние, указывая, что в Армении действуют все 7 видов туристических рынков (культурный, эко, деловой, развлекательный, лечебный, оздоровительный, приключенческий).

По анализу материалов профессиональной литературы, авторы приходят к выводу, что в Армении агротуризм считается сравнительно применимым, так как имеет богатое биоразнообразие, ландшафты, жилищные фонды в сельской местности для принятия и обслуживания сельских туристов на должном уровне.

Вместе с тем следует отметить, что хотя Республика Армения располагает достаточными ресурсами для туризма в целом и агротуризма в частности, все же существует ряд препятствий:

- инфраструктуры разрешенного сектора распределены непропорционально (гостиничные хозяйства, дороги, сувенирные магазины, сервисные службы и т. д.),
- низкий уровень оказания рекламно-информационных и экскурсионных услуг,
- отсутствует концепция развития туризма,

- региональные и межобщинные дороги в плачевном состоянии и т.д.

Для дальнейшего развития туризма необходимо:

✓ провести инвентаризацию и оценку туристических ресурсов,

✓ разработать и применить методы рекламы с использованием современных технологий,

✓ разработать программы развития туризма областными администрациями,

✓ создать туристические офисы в административных районах, проводить обучение гидов,

✓ организовывать курсы по внедрению международного опыта для развития агротуризма.

Ключевые слова: *туризм, предпринимательская деятельность, агротуризм, сельская жизнь, туристическая инфраструктура.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 18.11.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 25.11.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.: